ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «08» ապրիլի 2024թ.

ժամը 15:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,

Բացող անդամներ՝ Ա. Կատվալյան, Գ.Աղլամազյան,

Քարտուղար՝ Ս.Մելքոնյան,

<u>ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին</u>

Գ.Բոշյան

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Սյուզաննա Մելքոնյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 2 /երկու/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն, էլ.հասցե
1	«Ստեպռոեկտ» ՍՊԸ	Ք.Երևան, Մ.Բաբաջանյան շ.39 Chartarapet2424@mail.ru
2	«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ	ք.Գավառ, Արծրունի եղբ. 85 hergnyan.raf@mail.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) «Ստեպռոեկտ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով,
«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/2 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

3.1) «Ստեպռոեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- ներկայացրած մատուցվելիք ծառայություններում ներգրավվելիք համաձայնագրում բացակայում է փաստաթղթի կազմման ամիս, ամսաթիվն ու վայրը,
- ներկայացրած հայտի հավելված 3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ նշվել է, որ Հայկ Մուրադի Պողոսյանը հանդիսանում է ճարտարագետ, սակայն համաձայնագրում նշվել է ճարտարապետ,
- Իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը նշվել է 2023 թվականին հաստատված տեղեկատվությունը, 2024 թվականի փոխարեն:
- Հայտով ներկայացրած նախկինում կատարած 12.04.2022թ. կնքված պայմանագրի վերջնաժամկետը սահմանված է՝ 20.04.2022թ.-ը: Հանձնման ընդունման արձանագրություն N 153, N 154 և N 155-ում նշված են փաստացի կատարման ժամկետը՝ 20.04.2022թ., իսկ վճարման ժամկետը

/ըստ վճարման ժամանակացույցի/՝ 25.04.2022թ., սակայն ֆիքսման ակտում նշվել է, որ Կապալառուն հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին է հանձնել աշխատանքները՝ 26.04.2022թ.-ին, դրական եզրակացությունը տրվել է՝ 26.04.2022թ.-ին, որտեղ նշված չէ փաստացի կատարման ժամկետը: Միևնույն ժամանակ հաշիվ վավերագիրը դուրս է գրվել 26.04.2022թ.-ին և մատուցման ամսաթիվը նշվել է 26.04.2022թ.: Հետևաբար առկա են կատարման ժամկետների անհամապատասխանություններ՝ պայմանագրի արդյունքների հանձնման ընդունման վերաբերյալ կազմված փաստաթղթերում:

3.2) «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- հրավերում առկա փաստաթղթերը ստորագրվել են մի անձի կողմից, որը չունի նման լիազորություն՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.6 կետի պահանջները,
- ներկայացրած հայտի հավելված 3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ նշվել է ճարտարագետ, ջեռուցման, օդափոխության, օդորակման որակավորմամբ մասնագետ Ա.Հակոբյանին, սակայն բացակայում է տվյալ անձի կողմից մատուցվելիք ծառայություններում ներգրավվման վերաբերյալ հաստատված գրավոր համաձայնությունը՝ համաձայնագիրը:
- բացակայում է հավելված 3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ նշված մասնագետների փաստաթղթերը (անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները))՝ չի պահպանվել հրավերի փաթեթի 2.5.2 կետի պահանջները,
- ներկայացրած մատուցվելիք ծառայություններում ներգրավվելիք համաձայնագրերում բացակայում է փաստաթղթի կազմման ամիս, ամսաթիվն ու վայրը,
- համաձայնագրերում չի նշվել թե որ չափաբաժնի ծառայությունների մատուցմանն է ներգրավվում աշխատակիցը:
- Հավելված 1-ում /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարություն/ սխալ է նշվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:
- հավելված 3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ նշված մասնագետների ցանկում որպես ճարտարագետ շինարար նշվել է Ավետիք Հերգնյանին, սակայն կցված է ճարտարագետ-կոնստրուկտոր Էդվարդ Շարուրի Քոչարյանի արտոնագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Հիմք ընդունելով վերը նշվածները, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2023 թվականի մարտի 29-ին ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/2 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «Ստեպռոեկտ» ՍՊԸ-ին և «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 10/04/2024թ.-ը ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը, այդ թվում մեկ այլ նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր կամ պատվիրատուի կողմից տեղեկանք՝ աշխատանքների պատշաճ կատարման վերաբերյալ:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի, իսկ ոչ գնային պայմանները կգնահատվի հրավերով սահմանված կարգով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի ապրիլի 11-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԿԱՏՎԱԼՅԱՆ
		Գ.ԱՂԼԱՄԱՋՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ